

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՎԵՀԱՆՉՆՈՒԹԻՒՆ

(Ժողովրդական զրոյց)

Ա.

Հին ժամանակը երկրում հեռաւոր
Ապրում է եղել մի քաջ թագաւոր.
Ինքն վեհանձն, երեք որդւոց տէր.
Ունէր արծաթ փող, անչափ հարուստ էր:
Երբ նա ծերացաւ, մահին մօտեցաւ,
Կայքը որդւոց մէջ բաժնել ցանկացաւ.
Եւ տուաւ նրանց բաժին հաւասար.
— «Մնում է ահա մի սիրուն գոհար.
Ես կըտամ ձեզ այն—իբր արածնութիւն,
Ո՛վ կեանքում կանի մի վեհանձնութիւն...
Իսկ դրա համար ես ձեզ ապիս եմ
Չորս ամիս միջոց, մինչև կըսպասեմ,
Որ գնաք շրջէք ուղած աշխարհներ
Ու գաք պատմէք ինձ ձեր գլխի անցքեր
Ո՛վ վեհանձնութիւն արած կըլինի՝
Անգին գոհարը նրան կընծայուի...»

Բ.

Շուտով որդիքը հօրից հեռացան,
Զանազան կողմեր ցրուել սկսան.
Ման եկան անթիւ գիւղեր քաղաքներ
Եւ կատարեցին վեհանձնութիւններ...
Ապա դառնալով լրացած ժամին՝
Հօրն արածները մէ՛կ մէ՛կ պատմեցին.
Անդրանիկ որդին ասաց. — «Հայր իմ,
Պատուէրիդ եղայ ես հաւատարիմ,
Արի իսկապէս մի վեհանձնութիւն,

Գոհարը տո՛ւր ինձ — իբր արտօնութիւն...»
— «Նախ պատմիր, տեսնեմ, արածըդ ի՞նչ է
Գոհարն «իրաւամբ» յետոյ պահանջէ»:

Նա պատմեց այսպէս.

— «Զբգիտեմ ինչպէս

ճամբորդութեան մէջ մի մարդ հանդիպեց.

Ողջ հարստութիւն ինձ յանձնարարեց.

Ո՛րքան միամիտ էր այն օտարական,

Զառաւ ինձանից մի ստացական...»

Բայց միտ բերելով վեհանձնութիւնը՝

Յետ դարձրի նրան հարստութիւնը...»

— «Որդեակ, պատուէրըս դու չես հասկացել.

Դու քո սրբազան պարտքն ես կատարել.

Ազնիւ լինելը ամեն մի մարդու

Պարտականութիւն է — հաւատա՛ ինձ դու —

Դու արեւ ես այն, ի՞նչ պէտք անէիր,

Այլ կերպ վարուելով՝ տղէտ կ'իներ...»

Հաւատարմութեամբ դու բացել ես բեզ

Գործունէութեան ազատ ասպարէզ.

Ամենքը խօսքիդ հաւատ կ'ընծայեն.

Նեղ բոպէներին օգնել կարող են.

Բայց քո արածը չէ վեհանձնութիւն.

Դու ցոյց ես տուել հաւատարմութիւն...»

Գ.

Ապա սկսեց պատմել միջնակը.

— «Իմ ճամբորդութեան այն ժամանակը,

Երբ անցայ մի օր լճի եզերքով,

Բացուեց տեսարան այս կերպարանքով.

Պըսպղում էր ջուր մաքուր ու յստակ.

Ծըփուում ալիքներ կոհակ առ կոհակ.

Այդ տեսարանով մինչդեռ զմայլուած՝

Ալիքների մէջ ի՞նչ տեսնեմ յանկարծ.

Մի փոքրիկ տղայ ընկած՝ խեղդուում էր.

«Օգնութի՛ւն» լացով աղաղակում էր:

Ես ինձ մոռացայ, իսկոյն վազեցի

Եւ այն փոքրիկի կեանքն ազատեցի.
 Ինչ կասես, հայրիկ, այս պատահարը
 Վեհանձնութիւնն է՛. — տուր ինձ գոհարը...»
 — «Շատ ապրիս, որդի՛ս, շնորհաւորում եմ
 քո այդ արածը, բայց՝ ոնց տեսնում եմ՝
 Այդտեղ էլ չըզոյ իսկ վեհանձնութիւնն,
 Այլ մի կարեկցած ըարեգործութիւնն...»

Գ.

Վերջապէս խօսեց բամենափողորը.
 Եւ տեսէք թէ նա ի՞նչ ասաց հօրը.
 — «Մի օր ես տեսայ իմ վատ թշնամին
 Շատ խորն էր քնած մի ժայռի գլխին,
 Այնպէս որ եթէ մի քամի փչէր՝
 Խոր անդունդի մէջ պիտի գլորուէր
 Բայց ես հանդարտիկ զարթեցրի քնից,
 Կեանքը փրկեցի մահու փորձանքից...»
 «Ո՛հ, իմ զաւակըս, քոնն է զորարը. —
 Ասաց բարեսիրտ ծերունի հայրը. —
 Ի՛նչ վեհանձնութիւնն թշնամուն սիրել
 Եւ նրա կեանքը մահից ազատել...»:

Փոխադր. ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԵԱՆՑ

ՄԵՅՐԵԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

(Բարոյախօսական պատմութեամբ)

«Իմ չափ հասակի
 Ուրիշ աղջիկներ
 Սիրուն լողայի
 Հագնում են շորեր.
 Իսկ ես, մայր անգին,
 Այս տօն օրերին
 Ի՞նչով զարդարուեմ,
 Ի՞նչով ես մարդկանց
 Հաճելի լինեմ, —

Այսպէս մի աղջիկ
 Ասում էր իւր մօր, —
 Ձէ որ դու, մայրիկ,
 Խոստացար մի օր
 Գնել ինձ համար
 Թանկագին մի շոր...»
 — «Լսիր, զաւակ
 Իմ սիրասուն,
 Ասաց դստեր

Մայրն իմաստունն,
 Օղակներ անգին
 Քո ականջներին
 Ձեռն տալ լսելիք. —
 Կրճքի վրալ լիք
 Մանեակների փալլ
 Քո սրտին չի տալ
 Ողորմ, բարի կամք,
 Ո՛չ գուժ, ո՛չ խընամք...
 Իսկ ճակատների
 Ձարդարուն շարքը
 Ձի կարող գլխի
 Աւելցնել խելքը...
 Ահա մի զգեստ
 Խորհուրդ եմ ընտրել,
 Որով դու համեստ
 Կարող ես լինել.
 Մարդու ամեն,
 Սիրուն Աշխէն
 Թո՛ղ լինի,

Սիրելի,
 Գլխիդ զարդը՝
 Պարկեշտուժիւն.
 Քո հանդերձը՝
 Անմեղուժիւն.
 Դէմքիդ քողը՝
 Ամօթուժիւն.
 Անգին քարը՝
 Խոնարհուժիւն.
 Մարգարիտներ՝
 Սիրոյ շիթեր,
 Մարգ'սիրուժեան
 Արտասուքներ.
 Քո հայելին՝
 Խղճմտանքը.
 Եւ հագուագիւտ
 Քո վարդերը՝
 Լաւ մտածմունքներ,
 Խօսքեր և գործեր...»

Փոխադր. ԳՐԴԳՈՐ ԲԱԼԱՍՅԱՆՅ

ԴՈՎՐԻ ԳԻՒՂԻ ԿԵԱՆՔԻՑ ¹⁾

Ա.

Դ Ի Ի Ա Ն Ի

Խետ գարնան ծաղկըներուն կըլլես սեհրան, Մարգարիտ.
 Ես էլ տեսայ մահճամալդ ²⁾, էլայ բիրեան ³⁾, Մարգարիտ.
 Սալամ կաքաւի պէս կըկարդաս, ձայնդ բաղցր պատուական,
 Ի՞նչ անուամ տուտի զումրին ⁴⁾ դու ես ջէյրան Մարգարիտ:
 Մէկ Աստըծուց ումիշ ⁵⁾ ունիմ, վարդարար ⁶⁾ Ֆաս բո խանիդ
 Քչեր-ցերեկ մայիլ էլայ ⁷⁾, բարակ պռօշ դըհանիդ ⁸⁾.

¹⁾ Գրի է առնուած Էջմ. գաւ. Դովրի գիւղում Արայի լե-
 րան ստորոտ, 1899 թ.

²⁾ Զբօսնելու: ³⁾ Դէմքդ: ⁴⁾ Խորոված: ⁵⁾ Թռչուն է: ⁶⁾
 Խնդիր: ⁷⁾ Հաստատ: ⁸⁾ Հիւծել: ⁹⁾ Ատամներ: